Է. Գ. ԵԱՂԵՐՑԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Դասական հայերենը հարուստ է ստորադասական բարդ նախադասության մեջ արտահայտված ժամանակի շարահյուսական կատեգորիան նշող պարագայական նախադասություններով։ Նա օժտված է ժամանակային ամենաբազմաղան հարաբերություններ դրսևորելու իմաստային երանգներով ու կառուցվածքային տարբեր տիպերով։

Ուսումնասիրելով ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները գրաբարում, նկատում ենք, որ դրանք դրսևորվում և կառուցվում են՝ ա) ստորադասական շաղկապներով, բ) հարաբերական բառերով և գ) բարդ նախադասության մասերի շարադասման անշաղկապ ձևերով։ Սակայն մենք սույն հոդվածում սահմանափակվում ենք շաղկապներով և հարաբերական բառերով կազմվող ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների հետազոտմամբ, թողնելով անշաղկապ ձևերի ուսումնասիրությունը ա՛յլ առիթի։

Ժամանակի երկրորդական նախադասությունները, ժամանակային հարաբերությունները արտահայտելու տեսակետից, բաժանվում են երկու մեծ խմբերի.

Առաջին, երբ ստորադասական բարդ նախադասության երկու մասերի գործողություններն էլ կատարվում են միևնույն ժամանակում, ուստի և միաժամանակյա գործողություն են նշում։

Երկրորդ, երբ ստորադասական բարդ նախադասության երկու մասերի գործողությունները կատարվում են տարբեր ժամանակներում։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԻԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏՎՈՂ ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ միաժամանակություն ցույց տվող բարդ ստորադասական նախադասության կազմում գլխավոր և երկրորդական մասերի գործողությունները կատարվում են միևնույն ժամանակահատվածում, ժամանակի միևնույն շրջանակում, առանց մեկը մյուսին հաջորդելու կամ նախորդելու։ Չնայած դրան, միևնույն այդ ժամանակահատվածի նկատմամբ գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողությունները, տևողության առումով, տարբեր են լինում, ըստ այդմ էլ ժամանակային բազմազան հարաբերություններ են բացահայտվում հենց այդ միաժամանակության շրջանակում։ Ելնելով դրանից, միաժամանակություն ցույց տվող բարդ ստորադասական նախադասությունները, իրենց հերթին, մենք բաժանում ենք մի քանի տարատեսակների։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏՎՈՂ ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասական հայերենում կան բարդ ստորադասական նախադասությունների այնպիսի տիպեր, որոնցում գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները գործողության հավասար մասնակցություն են ցուցաբերում ժամանակի միևնույն հատվածի նկատմամբ, ընդ որում գլխավոր նախադասության գործողության ժամանակը նկարագրվում և բացահայտվում է երկրորդական նախադասության գործողության ժամանակով։ Այդպիսի կառուցվածքները մենք անվանում ենք գործողության ընդհանուր միաժամանակություն ցույց տվող գլխավոր և երկրորդական նախադասություններ: *Սրանց դրսևորման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ բարդ նախադասության գլխավոր և երկրորդական մասերի ստորոգյալները արտահայտվում են ժամանակային տևողության տեսակետից ինչպես սկսված, բայց չավարտված, ընթացքի մեջ եղող, այնպես էլ սկսված և ավարտված գործողություններով, հետևաբար դրանք իրենց բնույթով լիովին համընկնում են միմյանց։ Այդ նշանակում է, որ նման կառուցվածքի նախադասության գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողությունները կատարվում են զուգընթացաբար։*

«Յորժամ երկիր չէր և ոչ տունկք ինչ որ ի նմանէ, զբարսմունսն ուստի՞ գտանէր ունել ի ձեռին, կամ բնաւ զինչ իսկ յուզէր, զի տնասունք չև ևս էին արարեալ» (Եզնիկ, Եղծ աղանդոց, էջ 83)։

«... յորժամ (արևն) մօտ հասանէ ի նա (ի լուսին)՝ լնու և յորժամ անցանէ զարեգակամբ՝ սկսանի սակաւ նուազել» (Ն. տ. 140)։

Սակայն ուշագրավ է դիտել մի հանգամանք, որը առանձնահատուկ է գրաբարի շարահյուսական համակարգին. ժամանակային հիշյալ հարաբերությունը արտահայտելու համար դասական հայերենը կառուցում է բարդ նախադասության այնպիսի տիպեր, որոնցում ժամանակի պարագա հանդիսացող երկրորդական նախադասությունների ստորոգյալները սահմանական եղանակի ներկա անկատարի փոխարեն դրվում են ստորադասական եղանակի առաջին ապառնու (ներկա) բայաձևով։

«... բրուտն յորժամ անօթս գործիցէ՝ ոչ ինքն անօթ լինի, այլ գործիչ է անօթոցն, ուստի և զանուանումն արուեստին առնու» (Եզնիկ, ԵԱ, 21)։

Եզնիկից վերցրած այս օրինակում, թեև երկրորդական և գլխավոր նախադասությունների ստորոգյալները բայական տարբեր ձևերով են արտահայտված, սակայն իրականում երկուսն էլ ներկայի իմաստով են գործածված։ Այս հանգամանքը բացատրվում է միայն գրաբարին հատուկ օրինաչափությամբ. ինչպես հայ խոշորագույն քերականագետները (Այտընյան, Չալըխյան) դիտել են, յորժամ, եթէ, որ, ուր և այլ բառերով սկսվող նախադասության մեջ սովորաբար ստորոգյալը արտահայտվում է ներկա անկատարի փոխարեն առաջին ապառնիով։ Նույն երևույթը դրսևորվել է նաև վերոհիշյալ բարդ ստորադասական նախադասության մեջ։

Սույն ենթատեսակին պատկանող բարդ նախադասության գլխավոր և երկրորդական մասերի շարահյուսական իմաստը, նրանց ժամանակային փոխհարաբերությունները դրսևորվում է քերականական հետևյալ միջոցներով.

ա) երկրորդական նախադասությունը կապվում է գլխավոր նախադասությանը յորժամ, իբրև, երբ հարաբերական բառերով, ինչպես նաև մինչ, մինչդեռ, եթէ, թէ շաղկապներով։

բ) ստորոգյալները իրենց եղանակային և ժամանակային հարաբերություններով մեծ դեր են կատարում շարահյուսական տարբեր իմաստներ արտահայտելու գործում։

գ) գլխավոր և երկրորդական նախադասությունների բառային կազմը համեմատաբար քերականական օժանդակ միջոց է հանդիսանում ժամանակային հարաբերություն նշելու համար։

դ) կարևոր քերականական միջոց է նաև գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը, որը նույնպես իմաստային երանգներ է առաջացնում։

Այժմ քննենք քերականական այդ միջոցների կոնկրետ կիրառությունը գրաբարի դասական շրջանի մատենագրության փաստերով։

ՅՈՐԺԱՄ.— Գործողության ընդհանուր միաժամանակություն է նշում գլխավոր նախադասությանը յորժամ հարաբերական բառով միացած երկրորդական նախադասությունների զգալի մասը։ Այս հարաբերական բառը դասական շրջանում գործածության լայն ոլորտ է ունեցել և իր կենսունակությամբ մրցման մեջ է եղել շարահյուսական հոմանիշ հանդիսացող իբրև հարաբերական բառի հետ։

Երբ դատողություն է արվում որևէ երևույթի, առարկայի և այլնի մասին ընդհանրապես, առանց ժամանակի կոնկրետացման, գլխավոր նախադասության մեջ օգտագործվում է սահմանական եղանակի ներկա ժամանակը, իսկ երկրորդական նախադասության ստորոգյալը առհասարակ դրվում է ստորադասական եղանակի առաջին ապառնիով, որը պայմանավորված է երկրորդական նախադասության սկզբում «յորժամ» հարաբերական բառի առկայությամբ, ուստի և հանդես է գալիս իր ձևական նշանակությամբ։

«Այդ այնմ նման է, յորժամ ի քարանց ոք շինուածս առնիցէ՝ պատշաճելոյն և յօրինելոյն միայն արարիչ է, և ոչ բնութեանն» (Եղն., ԵԱ, 22)։

Բայց այս երևույթը բացարձակ չէ, որովհետև հենց դասական շրջանի միևնույն հեղինակների մոտ հանդիպում ենք տատանումների, հետևաբար այդ օրինաչափությունը չի պահպանվում. յորժամ հարաբերական բառով կապակցվող երկրորդական նախադասության ստորոգյալը համապատասխանում է գլխավոր նախադասության ստորոգյալին՝ և՛ եղանակային, և՛ ժամանակային հարաբերությամբ։

«... որպէս և այժմ սպանողք յորժամ ի պատիժս մահանն՝ ոչ բարերարս զպատժածուսն կոչեն, այլ չարարարս» (Եղն., ԵԱ, 26)։

Ունենք նաև տվյալ հարաբերական բառով կապակցված այնպիսի բարդ նախադասություններ, որոնց գլխավոր և երկրորդական մասերը իրենց իմաստային փոխհարաբերությամբ ժամանակային գաղափար արտահայտելով հանդարձ, պայմանի շեշտված հարաբերություն են նշում։

«Եւ եղիցի յորժամ առնուցուք զքաղաքն, այրեսջիք զնա հրով» (Յեսու, Բ, 8)։

Սակայն այս տիպի երկրորդական նախադասությունները պայմանի երանգ հաղորդելով հանդերձ ամբողջ բարդ նախադասու-

թյանը, հիմնականում ժամանակային հարաբերություն են արտահայտում։ Այդ ապացուցելու համար կարող ենք դիմել հետևյալ միջոցի. հեշտությամբ կարելի է տվյալ բարդ նախադասությունների յոթժամ հարաբերական բառը փոխարինել եթէ, թէ շաղկապներով։ Բայց այս դեպքում ևս ժամանակի իմաստային կողմը պիտի գերակշռեր պայմանականի նկատմամբ։ Մյուս կողմից՝ ունենք հենց եթէ, թէ շաղկապներով կապակցված այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնք պայմանի իմաստի հետ զուգընթաց, ըստ էության, ժամանակային հարաբերություն են նշում։ Այս երևույթը վկայում է այն մասին, որ ժամանակի և պայմանի երկրորդական նախադասությունները սերտ աղերսակցության մեջ են գտնվում միմյանց հետ, հետևաբար փոխանցման լայն հնարավորություն են ձեռք բերում։

«Եթէ տեսանիցես զարծաթ, համարեսջիր թէ անագ իցէ» (Ոսկեբերան, հատ. 1, էջ 61)։

Յոթժամ հարաբերական բառով կապակցվող երկրորդական նախադասությունները արտահայտում են նաև ապագայում կատարվելիք գործողություն. երկրորդական նախադասության ստորոգյալը դրվելով 1-ին կամ 2-րդ ապառնիով՝ արտահայտում է ըղձական եղանակի իմաստ, իսկ գլխավորինը՝ սահմանական եղանակի ներկա ժամանակով կամ 2-րդ ապառնիով դրսևորում է պայմանական եղանակի իմաստ.

«Յոթժամ սա իմ, սա քո իցէ, յայնժամ յուզի կագ, և ուր այն չիցէ, և ոչ կագ ի միջի և ոչ հակառակութիւն ծնանի» (Ոսկ., հատ. 1, 103)։ «Դու առ այժմ երթ, և յոթժամ ժամ լիցի, կոչեցից զքեզ» (Գործք առաքելոց, 25—26)։

Ընդհանրապես ապագայում պարբերաբար կատարվելիք գործողության դեպքում, գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները կարող են դրվել 2-րդ և առաջին ապառնիով։

«Ցնծասցեն շրթունք իմ՝ յոթժամ սաղմոս ասիցեմ քեզ, և անձն իմ զոր և փրկեցեր» (Գիրք Սաղմոսաց, 2, 23)։

Երբ բարդ նախադասությամբ հաղորդվում է հորդոր կամ հրաման մի բան չանելու կամ մի բանից խուսափելու վերաբերյալ, երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է 1-ին ապառնիով։

«Մի յապաղեր բարի առնել կարօտելոյ, յոթժամ ձեռնհաս իցես օգնել նմա» (Առակք Սողոմոնի, Գ, 27)։

Առանց իմաստային երանգ ավելացնելու վերջին տիպի նախադասությունների վրա, մի արգելական մասնիկով 1-ին ապառնիի

հանդիպում ենք հետևյալ կառուցվածքի նախադասություններ-ի մեջ.

«... եւ յորժամ ելանիցէք, մի ելանիցէք դատարկք» (Ելք, Զ, 7)։

Անցյալում հաճախակի կատարվող գործողությունը դասական ըրշանի գրաբարում դրսևորվում է գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալների անցյալի անկատարի օգտագործմամբ։ Այդ հանգամանքը բխում է նրանից, որ սահմանական եղանակի անցյալի անկատարը արտահայտում է այնպիսի գործողություն, որը անցյալ ժամանակակետի նկատմամբ սկսված, բայց չավարտված, ընթացքի մեջ եղող, շարունակական գործողություն է նշում, որի միջոցում թույլ է տրվում կատարել սովորական տեղի ունեցող գործողություն։

«Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի, ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի ի մատունսն ըմպել, յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զօրացն իւրոց, ասէր ճերմակաձին գինի արբցէ» (Բիւզ. 284)։

Երբ հարկավոր է ցույց տալ անցյալ ժամանակում սկսված և վերջացած գործողություն, այդ դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները դրվում են անցյալ կատարյալ ժամանակով։

«Յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ» (Ղուկասու, ԺԵ 30)։

Երբեմն երբ երկրորդական նախադասության ստորոգյալը արտահայտվում է անցյալ դերբայով, հանդես է գալիս իբրև դերբայական նախադասություն, ապա գլխավոր նախադասության ստորոգյալը թեև դրվում է անցյալի անկատարով, բայց դրսևորում է անցյալում սկսված և ավարտված գործողություն, այսինքն՝ վերջինս ներկայանում է անցյալ կատարյալի փոխարեն։

«Իսկ նա յորժամ հասեալ առ Վարազն, յայտ առնէր զիրս խնայութեանն, ի գրգռութիւն ջանացեալ ոչ կամէր բժշկել զնենդախօսութիւնն իւր» (Բիւզ., ՊՀ, 254)։

Երբ գլխավոր նախադասության գործողությունը կատարվել է վաղ անցյալում, ստորոգյալը դրվում է բաղադրյալ ժամանակով՝ վաղակատար-հարակատար անցյալով[1], այն է՝ անցյալ դերբայով և եմ օժանդակ բայի անցյալի անկատարով։

---

[1] Օգտագործում ենք դոց. Ա. Աբրահամյանի՝ իր «Գրաբարի ձեռնարկում» (էջ 243, 1952 թվականի հրատ.) առաջարկած տերմինը, որն ավելի ճշգրիտ է բացահայտում տվյալ բայաձևի եղանակային և ժամանակային հարաբերությունները։

«Զայս ամենայն բազմութիւն Հրէից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ի Հայս զքահանայապետն Հրէից զՀիւրկանոս զառաջին ժամանակաւ» (Բիւզ., 262)։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողության կատարման ժամանակների անհամաձայնության բացառիկ երևույթ է, երբ երկրորդական նախադասության ստորոգյալի անցյալ ժամանակին՝ գլխավոր նախադասության մեջ փոխանակ ստորոգյալի անցյալ ժամանակը համապատասխանելու, որպիսին ընդհանուր օրինաչափություն է մնացած բոլոր դեպքերի համար, ներկա ժամանակն է գործածվում, եթե բայը առնչ բառն է։

«Եւ եղև յորժամ ածին ժողովեցին զամենայն զգերին քաղաքին ի մի վայր, և անցուցին ըստ Տափերն կամուրջ, և առնէին համար գերտյն, ի մէջ շերտափակ զօրացն պատէին, ասեն զօրագլուխքն Պարսից ցՀուիթ երէց քաղաքին Արտաշատու» (Բիւզ., 261)։

Ընդհանրապես երկրորդական նախադասությունները գլխավորին կապող յորժամ հարաբերական բառին գլխավորի մեջ հարաբերյալ չի համապատասխանում։ Բայց երբ անհրաժեշտություն է զգացվում գլխավոր և երկրորդական մասերի միջև ավելի սերտ կապակցություն ստեղծել, այդ դեպքում չի բացառվում գլխավոր նախադասության մեջ յայնժամ հարաբերյալի գոյությունը։ Դա ավելի շոշափելի ու անմիջական է դարձնում մտքի կապը երկուսի միջև։ Հարաբերյալն առկա է լինում այդտեղ իր ձևական նշանակությամբ, որի կոնկրետ բովանդակությունը բացահայտվում է միայն երկրորդական նախադասությամբ։

«...յայնժամ քաւեալ լիցիս ի նզովից աստի իմոց, յորժամ երթիցես ի տոհմն իմ...» (Մնունդք, ԻԴ, 41)։

Շարադասության տեսակետից մեր քննության առած յորժամ հարաբերական բառով կապակցվող երկրորդական նախադասությունները ազատ շարադասություն ունեն. նրանք հանդես են գալիս բարդ նախադասության և՛ սկզբում, և՛ մեջտեղում, և՛ վերջում, ուստի և լինում են նախադաս, միջադաս և վերջադաս։

ԻԲՐԵՒ.— Այս հարաբերական բառը դասական շրջանի մատենագրության մեջ ժամանակի երկրորդական նախադասությունները գլխավորին կապակցող, յորժամ հարաբերական բառի հետ զուգընթաց, հիմնական քերականական միջոցներից մեկն է հանդիսանում։ Նրանով կապվող երկրորդական նախադասությունների նշանակալի մասը գործողության ընդհանուր միաժամանակություն են

ցույց տալիս գլխավոր նախադասությունների գործողության զուգընթաց, նրանց հետ միասին։ Շարահյուսական հոմանիշ լինելով յորժամ հարաբերական բառին, իր կատարած ֆունկցիայի և կիրառության եղանակի տեսակետից ոչնչով չի տարբերվում նախորդից։

«Եւ իբրև արևն ի մուտս լինէր, բոցք հատանէին» (Ծնունդք, ԺԵ,17)։ «Եւ իբրև ելին ի նաւն, հանդարտեաց հողմն» (Մատթ., ԺԴ, 32)։

ԵՐԲ.— Գործողության ընդհանուր միաժամանակություն են նշում նաև երբ հարաբերական բառով միացած երկրորդական նախադասությունները։ Շարահյուսական ֆունկցիայով և կիրառության եղանակով այս հարաբերական բառը նման է յորժամ, իբրև, մասամբ նաև մինչ շաղկապով ժամանակային հարաբերություն ցույց տվող բառերին։ Բայց գործածության հաճախականության տեսակետից այն չափազանց աննշան է, հանդիպում է շատ հազվադեպ։ Եղնիկի մոտ դիտել ենք երբ հարաբերական բառով միացած ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների ընդամենը երկու դեպք։ Այդ նշանակում է, որ նման կառուցվածքի պարագայական նախադասությունները նորագոյացումներ են հենց դասական շրջանից սկսած, որոնք օժտված լինելով մեծ կենսունակությամբ, հետագայում դուրս են մղում յորժամ և իբրև հարաբերական բառերով կառուցված երկրորդական նախադասությունները և այնքան են ծավալվում ու տիրապետող դառնում, որ արդեն աշխարհաբարում ժամանակի պարագա (և ո՛չ միայն ժամանակի պարագա) երկրորդական նախադասությունների գերակշիռ մասը այդ հարաբերական բառով է կառուցվում։

«Եւ զիա՞րդ իցէ, զի հրեշտակք երբ լսեն զանունն Աստուծոյ՝ ուրախ լինին, և զեզ ոչ երբէք» (Եզն., ԵԱ, 104)։ «Երիկունն, երբ ի մահիճսն ելանես, համարեա թէ ի գերեզման ես իջեալ» (Եզն., ԵԱ, 213)։

Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ միշադաս է գործածված երկրորդական նախադասությունը. բայց եթե առաջին օրինակում երկրորդական նախադասությունը նկարագրում ու բացահայտում է գլխավոր նախադասության գործողությունը ժամանակի տեսակետից, ապա վերջին օրինակում երկրորդական նախադասությամբ ավելի ճշգրտվում, կոնկրետացվում է գլխավոր նախադասության անդամ հանդիսացող երիկունն ժամանակի պարագայի բովանդակությունը։

Ուշագրավ է հետևյալ միավորյալ բարդ նախադասությունը, որի կազմում կան երկու բարդ նախադասություններ, որոնց երկրորդական մասերը մի դեպքում գլխավորին միացել է «յորժամ» հարաբերական բառով, մյուս դեպքում՝ երբ հարաբերականով, բայց շարահյուսական ֆունկցիայի տեսակետից միևնույն պաշտոնն են կատարում և իմաստային միևնույն երանգով են օժտված, այն է՝ ընդհանուր միաժամանակություն արտահայտելով հանդերձ, երկրորդաբար դրսևորում են պայմանի իմաստ։

«Ճրագ մարմնոյ ակն է. յորժամ ակնն առատ է, ամենայն մարմինն լուսավոր եղիցի, եւ երբ ակն չար է, եւ մարմինն խաւարին եղիցի» (Ղուկ., ԺԱ, 34)։

ՄԻՆՉ.— Այս շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները մեծ մասամբ նույնպես ընդհանուր միաժամանակյա գործողություն են նշում իրենց գլխավոր նախադասությունների հետ, թեև համեմատաբար յորժամ և իբրև հարաբերական բառերից գործածության առավել սեղմ ոլորտով և սակավադեպ կիրառությամբ։ Շարահյուսական ֆունկցիայով և կիրառության եղանակով թեպետև հիշեցնում է նախորդներին, սակայն ի տարբերություն վերջիններին, ժամանակի ըմբռնման տեսակետից գլխավոր և երկրորդական նախադասությունների փոխհարաբերության առնչությամբ ժամանակային առավել կամ նվազ երկարատև միջոց է ենթադրում, քան յորժամ, իբրև, երբ հարաբերական բառերով կապակցվող երկրորդական նախադասությունները, և արտահայտում են գլխավոր նախադասության գործողության տևողություն այնքան ժամանակ, որքան, կամ քանի դեռ շարունակվում է երկրորդական նախադասության գործողությունը։ Այս առումով արդեն այստեղ առկա է սահմանափակման գաղափարը, այսինքն՝ գլխավորի գործողությունը պայմանավորվում և սահմանափակվում է երկրորդական նախադասության գործողության ծավալով։ Այս երկու առանձնահատկություններն անհրաժեշտ է ընդգծել, որպեսզի ճշգրիտ պատկերացում կազմենք այս տիպի բարդ նախադասությունների վերաբերյալ։

«Զոր օրինակ փայտ, խոտ, եղէգն, թէ ընդ վայր անկեալ կայցեն ի դաշտի, մինչ չեր իցէ և պարզ, թէպէտ և ցիր կայցէ, չխարխարի ի տեղւոյն...» (Սեգճ, 26)։ Համեմատի՛ր նույն նախադասության շարունակությունը. «...խակ յորժամ հեղեղ սաստիկ յառնիցէ, խաղացուցանէ միանգամայն զփայտն և զխոտն և զեղէգն» (Սեգճ, 26)։

Սահմանափակության իմաստը ուժեղ է ընդգծված այնպիսի բարդ նախադասություններում, որոնց գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը կամ եղելությունը անցյալ ժամանակակետի նկատմամբ սկսված բայց չավարտված վիճակում է գտնըվում այնքան ժամանակ, որքան ժամանակ հարատևում է երկրորդական նախադասության մեջ։ Այստեղ սահմանափակության հետ միասին դրսևորվում է գործողությունների պայմանավորվածություն, նրանց կատարման հարաբերական համեմատություն, մեկի կատարմամբ տեղի է ունենում նաև մյուսը։ Նման կառուցվածքի նախադասության գլխավոր և երկրորդական մասերում ստորոգյալը լինում է բաղադրյալ, այսինքն՝ վիճակ արտահայտող բառից և օժանդակ բայի անցյալի անկատար բայաձևից բաղկացած. այս դեպքում անհրաժեշտ է շեշտել նաև ժամանակային հարաբերությունը, որն արտահայտվում է երկու մասերում էլ միայն շարունակական ընթացք ցույց տվող բայաձևով, իսկ անցյալ կատարյալ բայաձևը միանգամայն բացառվում է։

«Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնա ի միոյ լերին կայր, և միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր» (Բիւզ., 256)։

Սակայն ունենք նաև այնպիսի բարդ նախադասություններ, որոնց մեջ ամենևին չի զգացվում մինչ շաղկապով միացող երկրորդական նախադասությունների ժամանակային տևողություն՝ քանակային առումով, ուստի և սահմանափակության գաղափարը բացակայում է։ Այս տեսակետից մինչ շաղկապը ձեռք է բերում յորժամ, իբրև, երբ հարաբերական բառերի շարահյուսական հոմանիշի դեր։

«Մի՛, գուցէ մինչ քաղիցէք զորոմն, եւ զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք» (Մատթ., ԺԳ, 29—30)։

ՄԻՆՉԴԵՌ.— Պետք է նկատել, որ մինչդեռ շաղկապով միացող երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասության հետ ունեցած իրենց իմաստային հարաբերությամբ հիմնականում կատարում են շարահյուսական մի ֆունկցիա, այդ այն է, որ երկրորդական նախադասությամբ նկարագրվում է գործողության տեվողության մի ժամանակահատված, որի ընթացքում, ժամանակի միևնույն հարաբերությամբ, տեղի է ունենում գլխավոր նախադասության գործողությունը։ Այլ կերպ ասած՝ գլխավոր նախադասության գործողությունը տևում է այնքան ժամանակ, որքան ժամանակ շարունակվում է երկրորդական նախադասության գործողությունը։ Իսկ այդ հանգամանքը, իր հերթին, նշանակում է, որ գլխ-

խավոր նախադասության գործողության կատարումը պայմանավորված է և սահմանափակված՝ երկրորդական նախադասության գործողության հարատևությամբ։ Սահմանափակման հենց այս ֆունկցիայով է բնութագրվում մինչդեռ շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունների էությունը։ Ասվածից հետևում է, որ մինչդեռ շաղկապը ստանձնել ու զարգացրել է շարահյուսական այն ֆունկցիան, որը, ինչպես վերևում տեսանք, երկրորդաբար արտահայտում են մինչ շաղկապով միացող երկրորդական նախադասությունները։

«Եւ իրավախոն ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի» (Մատթ., Ե, 25)։ Հմմտ. «Գիտէք իսկ զի մինչ հեթանոսքն էիք, առ կուռսն անմռունչս որպէս երթայիք, եւ գայիք» «Թուղթ առ Կորնթ., Ա, ԺԲ, 2)։

Եթէ, թէ.— Պայմանի այս շաղկապները երբեմն իմաստային անցում են կատարում և մասամբ արտահայտում են ժամանակի իմաստային հարաբերություններ՝ պայմանի ընկալման հետ մեկտեղ։ Այդ դեպքում թէ, եթէ շաղկապների մեջ պայմանի իմաստը խաչաձևվում է և կարող է ըմբռնվել նաև ժամանակի երանգով։ Այս տիպի երկրորդական նախադասությունները, գործածության ծավալի տեսակետից, թեև շատ մեծ չափերի չեն հասել, բայց այնուամենայնիվ նրանց գոյությունը հենց դասական շրջանի մատենագրության մեջ նկատելի է։

«...թէ յապակի սպիտակ՝ ջուր արկեալ յարևու ունիցիս լուսաւորութեան արեւուն մտեալ ընդ սպիտակութիւն ապակւոյն, և ընդ յստակութիւն ջրոյն օդով թափանցանց անցեալ՝ հուր ծնուցանէ» (Եզն., ԵԱ, 153)։ «Զի՞նչ օգուտ է մարդոյ, թէ զաշխարհ ամենայն շահեսցի, և զանձն իւր կորուսցէ» (Փարպ., 59)։

Վկայված այս երկրորդական նախադասություններում պայմանի և ժամանակի գաղափարները սերտորեն միաձուլվում են։ Համեմատիր նաև հետևյալ նախադասությունները.

«Եւ եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա, եւ եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա» (Թուղթ առ Կորնթ., Ա. ԺԲ. 26)։ «Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ» (Եղիշէ, ՎՎՊ, 14—15)։

Շարադասության տեսակետից թէ, եթէ շաղկապներով միացող երկրորդական նախադասությունները ազատ են։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՄԻԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏՎՈՂ ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասական շրջանի գրաբարում կան նաև բարդ նախադասության այնպիսի տիպեր, որոնց մեջ գլխավոր և երկրորդական նախադասությունները թեև միաժամանակյա գործողություն են ցույց տալիս, սակայն օժտված են վերը քննած բարդ նախադասության տիպերից այն էական տարբերությամբ, որ ժամանակային տևողության տեսակետից իրար չեն ծածկում, չեն համընկնում բացարձակ կերպով։ Տվյալ ենթատեսակի կարևոր և հիմնական առանձնահատկությունն այն է, որ գլխավոր նախադասությամբ նկարագրվող գործողությունը կատարվում է ընթացքի մեջ եղող երկրորդական նախադասության գործողության որևէ կետում, նրա որևէ մոմենտում։ Սրանից հետևում է, որ նման կառուցվածք ունեցող բարդ նախադասությունները արտահայտում են մասնակի միաժամանակություն։ Մասնակիության այդ բնորոշ հանգամանքը քերականական տեսակետից արտահայտվում է նրանով, որ երկրորդական նախադասությունների ստորոգյալները դրվում են միայն սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակով, իբրև ընթացք, շարունակականություն, հարատևություն նշող բայաձևով; իսկ գլխավոր նախադասությունների ստորոգյալները անցյալ կատարյալ ժամանակով, իբրև կարճատև, սկսված և ավարտված գործողություն ցույց տվող բայաձևով, որը կատարվում է մի այլ երկարատև գործողության մեջ գտնվող երկրորդական նախադասության ստորոգյալի որևէ մոմենտում, հատվածում կամ կետում։ Կա նաև հակառակ երևույթը, երբ երկրորդական նախադասության գործողությունը կատարվում է ընթացքի մեջ եղող, առավել երկարատև ժամանակամիջոց ենթադրող գլխավոր նախադասության գործողության որևէ մի մոմենտում։ Այդ դեպքում ստորոգյալների բնույթը գլխավոր և երկրորդական նախադասություններում տարբեր է լինում, շրջվում է։ գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտվում է սահմանական եղանակի անցյալի անկատար բայաձևով, իսկ երկրորդական նախադասության ստորոգյալը՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալով։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև ժամանակային այս փոխհարաբերությունը արտահայտվում է հետևյալ քերականական միջոցներով.

ա) Երկրորդական նախադասությունները գլխավորին կապվում են գերազանցապես մինչդեռ շաղկապով.

«...Որմիզդ վերագոյն է քան զհայրն և իմաստուն. զի մինչ դեռ յորովայնի էր՝ զխորհուրդ հօրն գիտաց» (Եղն., ԵԼ, 93—94)։

Ուշագրավ է նման կառուցվածք ունեցող գլխավոր նախադասությունների բառային կազմը, որտեղ կարող են առկա լինել յանկարծակի, անդէն ժամանակի մակբայները, անա, անաւասիկ եղանակավորող բառերը, ի նմին ժամանակի բառակապակցությունը, և այլն, որոնք ընդգծում են գլխավոր նախադասության գործողության կատարվելը՝ ընթացքի մեջ գտնվող երկրորդական նախադասության հենց այդ մոմենտում, անմիջապես այդ կետում.

«...մինչ դեռ նայէի ևս՝ յանկարծակի ծնան հօտքն և բազմացան, և ծնունդքն լցին զվայրսն» (Ագաթանգեղոս, ՊՀ, 385)։ «...մինչդեռ երանելին սուրբն Հռիփսիմէ խօսէր զայս ամենայն՝ անդէն ի նմին գիշերի եկին հասին վաղվաղակի ի տեղի անդր իշխանք թագաւորին, և դահճապետն գահճօքն հանդերձ ընդ նոսա» (Ագաթ., ՊՀ, 106)։ «Մինչդեռ նա խօսէր, անա ամպ լուսաւոր հովանի եղեւ ի վերայ նորա» (Մատթ., ԺԷ, 5)։ «Եւ մինչդեռ պշուցեալ նայէին ընդ երկինս երթալոյ նորա, եւ անաւասիկ արք երկու երեւեցան նոցա ի հանդերձս սպիտակ» (Գործք Առաք., Ա, 10)։

բ) Գլխավոր և երկրորդական նախադասությունների ժամանակային և շարահյուսական նույնպիսի հարաբերությամբ հանդես են գալիս նաև իբրև քերականական միջոց օգտագործված մինչ շաղկապով միացող երկրորդական նախադասությունները։

«...մինչ կային նոքա յաղօթս, շարժեցաւ տեղին յորում էին ժողովեալ» (Գործք Առաք., Դ. 31)։

գ) Ունենք նաև յորժամ հարաբերական բառով կապվող երկրորդական նախադասություններ, որոնք նույնպես ժամանակային և շարահյուսական միևնույն ֆունկցիան են կատարում.

«Էր ինքն երեսուն և երկուց ամաց յորժամ եկաց ի թագաւորութեանն իւրում, եւ զութ ամ թագաւորեաց յԵրուսաղէմ» (Մնացորդաց, ԻԱ, 5)։

Ուշագրավ է, որ վկայված օրինակում երկրորդական նախադասությունը («յորժամ եկաց ի թագաւորութեանն իւրում) ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը կատարվել է գլխավոր նախադասության ընթացքի մեջ եղող երկարատև գործողության մի որևէ հատվածում։

դ) Ժամանակային և շարահյուսական նույն հարաբերությունը արտահայտելու համար, որպես քերականական միջոց, օգտագործվում է նաև երկրորդական նախադասությունները գլխավորին կապող իբրև հարաբերական բառը։

«Իբրև ի Պարսից աշխարհի էին, յայլոց ի տեղի և ի նոցուն հրապարակի աներկիւղ և անկասկած յանկարծորէն զայսպիսի զըգործ կարաց գործել» (Բիւզ., ՊՀ, 194)։ «... իբրև այսպէս or ըստ orէ ի սոյն միտս ցնորեալ դանդաչէր, մի ոմն մանկագոյն ի նախարարացն Հայոց ընդդէմ բանս եդ և ասէ» (Եղիշէ, ՎՎՊ, 13)։

Վկայված օրինակներում տվյալ ժամանակային հարաբերությունը դրսևորելուն իբրև նպաստող, օժանդակ քերականական միջոց են ծառայել գլխավոր և երկրորդական նախադասություններում եղած որոշ բառեր. եթե առաջին օրինակի գլխավոր նախադասության մեջ առկա է յանկարծորէն մակբայը, որը շեշտում, ընդգծում է գլխավոր նախադասության գործողության կատարվելը ակնթարթային արագությամբ երկրորդական նախադասության գործողության ծավալման մի կետում, ապա երկրորդ օրինակում՝ երկրորդական նախադասության կազմում հանդես եկած or ըստ orէ մակբայը ցույց է տալիս, շեշտում և սաստկացնում է նրա գործողության հարատև ընթացքը։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ՑՈՒՑՑ ՏՎՈՂ ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակային բոլորովին այլ հարաբերություն են նշում սույն ստորաբաժանման պատկանող բարդ նախադասությունները, քան միաժամանակյա գործողություն նշող ստորադասական նախադասությունները։ Ինչպես վերը տեսանք, միաժամանակյա գործողություն էին ցույց տալիս բոլոր այն բարդ նախադասությունները, որոնց գլխավոր և երկրորդական մասերի գործողությունները տեղի էին ունենում միևնույն ժամանակահատվածում, ժամանակի միևնույն շրջանակում։ Սակայն տվյալ խմբին վերաբերող բարդ նախադասությունները, ի տարբերություն միաժամանակյա բարդ նախադասությունների, իրենց գլխավոր և երկրորդական մասերով արտահայտում են ժամանակային այնպիսի հարաբերություններ, որոնք հաջորդականություն են նշում։ Ըստ որում այդ հաջորդականությունը իրագործվում է երկու կերպ.

ա) երբ երկրորդական նախադասության գործողությունը հաջորդում է գլխավոր նախադասության գործողությանը.

բ) երբ երկրորդական նախադասության գործողությունը նախորդում է գլխավոր նախադասության գործողությանը։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ենթախմբին վերաբերող բարդ նախադասությունները ունեն այն հիմնական առանձնահատկությունը, որ դրանց գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է նախքան երկրորդական նախադասության գործողության կատարումը, մինչև նրա տեղի ունենալը։ Հետևաբար գլխավոր նախադասության գործողությունը հարատևում է այնքան ժամանակ, քանի դեռ երկրորդական նախադասության գործողությունը հանդես չի եկել, չի սկսվել։ Այլ կերպ ասած՝ գլխավորի գործողությունը սկսված և ավարտված է լինում, անմիջապես որ սկսվում է երկրորդական նախադասության գործողությունը։

Օրինակ՝ «... ոչ տղայոյ ոք հաստատուն կերակուր տայ, և ոչ մեծամեծ խորհուրդս յայտնէ, և ոչ աւագ բանս խօսի, մինչև ի կատարեալ չափ հասակին հասանիցէ» (Եղն., ԵԱ, 161)։

Այս տիպի բարդ ստորադասական նախադասություններում գլխավոր և երկրորդական մասերի միջև ժամանակային հարաբերությունն ու շարահյուսական իմաստը դրսևորվում է ամենաբազմաղան երանգներով ու նրբություններով, որոնցից թվենք ամենաբնորոշ և էական տեսակները։

1. Երբ գլխավոր նախադասությունը պարզապես նախորդում է երկրորդական նախադասության գործողությանը, հետևաբար գործողությունների սոսկ հաջորդականություն է տեղի ունենում, առանց որևէ իմաստային երանգ հաղորդելու բարդ նախադասությանը, ըստ որում գլխավոր նախադասության գործողության դադարից հետո ենթադրվում է երկրորդական նախադասության գործողությունը։

«Մինչեւ տիւն նուազեսցէ եւ ստուերքն շարժեսցին, գնացից ես ինձէն» (Երգ երգոց, Դ 6)։

2. Գլխավոր նախադասության գործողության տևողությունը սահմանափակվում է երկրորդական նախադասության գործողությամբ և ժամանակային փոխհարաբերության տեսակետից թեպետև գլխավոր մասը իր գործողությունը սկսում և ավարտում է նախքան երկրորդական մասի գործողությունը, սակայն միաժամանակ այն նշում է տևողության չափ, ուստի և այդ բնույթի բարդ նախադասությունները օժտված են լինում նաև չափի պարագայի իմաստային երանգավորմամբ։ Նման տիպի բարդ նախադասություններում գլխավոր և երկրորդական գործողությունների հաջոր-

288

դումը բնորոշվում է դադարով։ Կառուցվածքային այս նախադասություններում, իբրև քերականական միջոց, գերազանցապես օգտագործվում է մինչև շաղկապը.

«Եւ կոչեցեալ զծառայս իւր ետ նոցա տասն մնաս, եւ ասէ ցնոսա, Յարգեցէք զայդ մինչև եկից» (Ղուկասու, ԺԹ, 13)։

Հանդիպում են նաև բարդ նախադասության այնպիսի կառուցվածքներ, երբ երկրորդական նախադասությունը գլխավորին կապվում է նաև առանց մինչև շաղկապի, այլ ուղղակի ցուրժամ հարաբերականով, որը շարահյուսական նույն ֆունկցիան է կատարում, ինչ մինչև շաղկապը։

«Արի, առ զմանուկդ և զմայր իւր, եւ փախիր յԵգիպտոս, եւ անդ լինիջիր ցուրժամ ասացից քեզ» (Մատթ., Բ, 13)։

Ժամանակային միևնույն հարաբերությունը բացահայտելու և շարահյուսական միևնույն իմաստը դրսևորելու համար, իբրև քերականական միջոց, գրաբարն օգտագործում է նաև մինչ, մինչ զի շաղկապները, իհարկե, ավելի նվազ չափով.

«Եւ այսպէս դիւաք վարեալ, այսպիսի գործս զամենայն աւուրս կենաց իւրոց ըմբռնեալ Պապն որդին Արշակայ, մինչ եհաս ի թագաւորութիւնն, մինչև ի մահ իւր» (Բիւզ., ՊՀ, 237—238)։ «Վասն որոյ անկանէր ի գաղտագողանս (Տիրիթ), մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ» (Բիւզ., ն. տ., 180)։

Ժխտական կառուցվածք ունեցող նույն տիպի բարդ նախադասություններում նկատելի են հետևյալ իմաստային նրբությունները. գլխավոր նախադասության գործողության կատարումը բացառվում է այնքան ժամանակ, քանի դեռ տեղի չի ունեցել երկրորդական նախադասությունը, բայց որի կատարումը ենթադրվում է միայն երկրորդական նախադասության գործողության կատարման դեպքում, նրանից հետո։ Այլ կերպ ասած, գլխավոր նախադասության գործողության կատարումը դրական առումով հնարավոր է ընկալել միայն այն պայմանով, որ կատարվի երկրորդական նախադասության գործողությունը, հետևաբար այստեղ առկա է պայմանավորվածության իմաստային ընդգծված երանգ։ Այդ նշանակում է, որ ժխտական ձևով ըմբռնելու դեպքում գլխավոր մասի գործողության խափանումը տևում է մինչև երկրորդական մասի գործողության տեղի ունենալը, իսկ դրական իմաստով գլխավորի գործողության թույլատրումը հնարավոր է երկրորդական նախադասության գործողության կատարումից հետո։

«Եւ ոչ հաւատային Հրեայքն զնմանէ թէ կոյր էր եւ բացաւ, մինչև կոչեցին զծնողս բացելոյն» (Յովհ., Թ, 18)։

Սակայն իմաստային այս երանգը դրսևորելու և շարահյուսական նույն ֆունկցիան կատարելու համար գրաբարն ստեղծել է կառուցվածքային առանձին տիպի բարդ նախադասություններ՝ իրենց կապակցման յուրահատուկ քերականական միջոցով, որպիսիք մեծ տարածում են գտել դասական շրջանի մատենագրության մեջ։ Այդ փաստը, իր հերթին, վկայում է այն մասին, որ դրանք օժտված են եղել առավել ակտիվությամբ ու կենսունակությամբ։ Նման կառուցվածքի երկրորդական նախադասությունները գլխավորին կապվում են մինչ չև բարդ շաղկապով, որը բաղկացած է մինչ շաղկապից և չև ժխտական մասնիկից։

«Մինչ չև բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք՝ որ (են) յերկինս կամ յերկրի, Զրուան ումն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք» (Եղն., ԵԱ, 19)։

Այս ենթատեսակին պատկանող կառուցվածքային առանձին տիպ են կազմում այն բարդ նախադասությունները, որոնց գլխավոր մասի գործողությունը կատարվում է երկրորդական մասի գործողությունից անմիջապես առաջ, նրան իսկույն ևեթ նախորդելով. այդ դեպքում գլխավոր նախադասության բառային կազմում անդէն վաղվաղակի և այլն մակբայները օժանդակ գեր են խաղում ժամանակային անմիջական հաջորդականություն արտահայտելու գործում.

«Եւ եղեւ մինչչեւ իմ կատարեալ էր զխօսս ի մտի իմում, անդէն վաղվաղակի ելանէր Ռեբեկա, և ունէր սափոր յուս իւր» (Ծնունդք, ԻԴ, 45)։

Ի դեպ՝ վկայված երկրորդական նախադասության ստորոգյալը անցյալ դերբայով դրված լինելու պատճառով, նրա ենթական արտահայտվել է սեռական հոլովով («իմ»), մի օրինաչափություն, որը հատուկ է գրաբարի շարահյուսական համակարգին։

3. Կան բարդ նախադասության կառուցվածքային սույն ենթախմբին պատկանող այնպիսի տիպեր, երբ գլխավորի գործողության կատարման հետևանքով իբրև արդյունք ստացվում է երկրորդական նախադասության արտահայտած գործողությունը։

«Եւ այսպիսի բանիւք գաղտնի հանապազ զթագաւորն գրգռէին մինչև հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզօրավարն Հայոց սպանանել» (Բիւզ., 353—4)։ «Սակայն ի նոյն հոր իջուցեալ զանձն իւր զամենայն աւուրս կենաց իւրոց, մինչև ի նմին հոր վաղճանեցաւ եղբայրն» (Բիւզ., 337)։

ԴՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասական շրջանի մատենագրության շարահյուսական համակարգն ունի բարդ նախադասությունների այնպիսի տիպեր, որոնցում գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողությունները նշելով հանդերձ ժամանակային հաջորդականություն, հանդես են գալիս միշտ հետևյալ հարաբերությամբ՝ երկրորդական նախադասության գործողությունը, իբրև կանոն, նախորդում է գլխավոր նախադասության գործողությանը։ Սակայն հենց այդ հաջորդականության բնույթից էլ առաջանում են երկրորդականի և գլխավորի կապակցման բազմապիսի իմաստային երանգներ։

«Յայնժամ յաճախիցեն անօրէնութիւնք, յորժամ սէրն ցամաքիցի» (Ոսկ., հ. 1, էջ 13)։

Այս օրինակում ընդգծված է պայմանի գաղափարը, այն, որ գլխավոր նախադասության գործողությունը կստացվի, եթե կատարվի երկրորդական նախադասությունը։

Պատճառա-հետևանքային իմաստ ունի հետևյալ նախադասությունը.

«Եւ գիտեմք, եղբարք, որչափ ինչ վշտանայ մարմին՝ յորժամ քարշեսցի զհերացն (ՍԵԳՃ, 107)։

Հիմունքային հարաբերություն է նշում բարդ նախադասությունը, երբ գլխավորի գործողությունը կատարվում է երկրորդականի գործողության հիման վրա, նրա դրդապատճառով.

«Իսկ թագաւորն Արշակ, իբրև լուաւ և ետես զայս ամենայն, անշնորհ առնէր զտալիսն և զբերելիսն կարասոյն» (Բիւզ., 162)։

Սակայն պետք է նկատել, որ սրանք պատճառի, պայմանի, հետևանքի, հիմունքի և այլն պարագաներ չեն հանդիսանում, որովհետև իրականում դրանք ժամանակային հաջորդականություն են արտահայտում, ուստի և համարվում են ժամանակի պարագա նախադասություններ։ Բանն այն է, որ երևույթների հաջորդականությունը, երևույթների կապակցությունները լինում են վերին աստիճանի բազմազան բնույթի, ըստ որում այդ կապակցության ձևերը լինում և՛ պատճառի, և՛ հիմունքի, և՛ հետևանքի, և՛ պայմանի, և՛ այլ տեսակի։ Հետևաբար օբյեկտիվ իրականության երևույթների այդ բազմապիսի կապակցությունները արդյունք են նրանց միմյանց նկատմամբ ունեցած սերտ հարաբերությունների, բխում են հենց այդ հարաբերություններից։ Ասվածից կարելի է եզրակացնել, որ այդ կապակցությունները իրենց հիմքում մտա-դատողական,

տրամաբանական կատեգորիաների դրսևորումներ էլ չեն հանդիսանում։ Գուցե այս վերջին հանգամանքն է այն արգելառիթ պատճառը, որ թույլ չի տալիս նման կառուցվածքի երկրորդական նախադասությունները համարել պայմանի, պատճառի, հիմունքի, հետևանքի և այլ պարագաներ։

Այժմ քննենք, թե հաջորդականության այս ձևը քերականական ինչ միջոցներով է իրագործվում։

1. Երկրորդական նախադասությունները գլխավորին կապվում են գերազանցապես յոթում և իբրև հարաբերական բառերով, առանց իմաստային տարբերակման. հետևաբար դրանք հանդես են գալիս հոմանիշային արժեքով։ Սակայն կիրառման եղանակի տեսակետից պետք է անել մի վերապահություն. այն, որ երկրորդական նախադասությունները իբրև հարաբերական բառով կապվում են հիմնականում անցյալ ժամանակակետում կատարված գործողությունների դեպքում, իսկ շատ հազվադեպ գործածություն ունի իբրև հարաբերականը ներկա և ապագա ժամանակակետերի նկատմամբ։ Այդ բացը լրացվում է յոթում հարաբերականի հաճախակի գործածությամբ՝ և՛ ներկա, և՛ ապառնի, և՛ անցյալ ժամանակակետերի նկատմամբ։

«Եւ որ ոչ ընկալցի զձեզ և ոչ լուիցէ բանից ձերոց, իբրեւ ելանիցէք ի սանէն կամ ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց» (Մատթ., Ժ, 14)։ «Եւ իբրև եմուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա» (Մատթ., 8)։ «Եւ յոթում ի շէն ուրեք իջանէր (Շաղիտայն), զբազում մոլորեալս դարձուցանէր նշանօք և արուեստիւք» (Բիւզ., 329)։

Ինչպես կարելի է դիտել սույն ենթախմբում բարդ նախադասությունների առանձնահատկությունները քննելիս, մեծ մասամբ գլխավորի և երկրորդականի հաջորդականությունը ընկալվում և ըմբռնվում է միայն հաղորդված երևույթների ուշադիր հետևումից, առանց այդ հարաբերությունը նշող կամ ակնարկող կողմնակի, օժանդակ միջոցի օգտագործման, Սակայն այդ հարաբերությունը ավելի բացահայտ և անմիջական դարձնելու համար որպես նպաստող միջոց գլխավոր նախադասության սկզբում գրաբարում օգտագործվում են նաև ապա, յետոյ, այնուհետև, դարձեալ և այլն բառերը, որոնք շեշտում, ընդգծում են գլխավորի հաջորդելը երկրորդականին.

«...իբրև եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անդր, ապա սպասեալ Յովհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, և ասէր»

(Բիւզ., 399)։ «Նախ ամենքեան իբրև բաղմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ» (Բիւզ., 255)։ «Այլ իբրև եղև խաղազութիւն ի մեջ թագաւորին Յունաց և ի մէջ թագաւորին Պարսից, այնուհետև կաղմէր զզօրս իւր թագաւորն Պարսից Շապուհ, և խաղաց ի վերայ Արշակայ արքային Հայոց մարտի պատերազմաւ» (Բիւզ., 211)։

Ակնբախ է, որ վերոհիշյալ կառուցվածքի բոլոր բարդ նախադասությունները գլխավոր մասի՝ երկրորդական նախադասությանը սոսկ հաջորդելու փաստն են նշում՝ ժամանակային հարաբերության տեսակետից։ Սակայն նույն ենթատեսակին վերաբերող նախադասություններ կան, որոնցում գլխավորի գործողությունը անմիջապես, իսկույն ևեթ կատարվում է երկրորդական նախադասությունից հետո։ Ժամանակային այս հարաբերությունը արտահայտելու համար գրաբարում օգտագործվում են իբրև նպաստող, կողմնակի քերականական միջոց անդէն, վաղվաղակի, փութապէս, անխափան, իսկոյն և այլ մակբայները գլխավոր նախադասության բառային կազմում.

«Որպէս թէ յորժամ ծնանիցին, անդէն և մահուանքն իւրաքանչիւր ուրուք սահմանիցին, և ըստ այն ոչ յառաջել ումեք մեռանել հնար իցէ, և ոչ յամենալ» (Եզն., 107)։ «... սուրբ քահանայքն իբրև լուան, իսկոյն գիտացին աղդեցութեամբ սուրբ Հոգւոյն զհասեալ բարի ժամ յուտոյ նահատակութեան իւրեանց» (Փրպ., 89)։ «Իսկ նոքա իբրև զայն ամենայն լուան, փութապէս վաղվաղակի հասանէին ի տեղին, և ականատեսք լինէին գործոյն յաղթութեան» (Եղիշ., 78)։

* * *

Ընդհանուր գծերով մենք նկարագրեցինք դասական շրջանի գրաբար համաժողովրդական լեզվի շարահյուսական համակարգում զգալի տեղ գրավող ժամանակի պարագա նախադասությունները՝ իրենց հիմնական առանձնահատկություններով ու դրսևորման եղանակներով։ Ցույց տալով ժամանակի պարագա նախադասությունների գլխավոր առանձնահատկությունները, իբրև եզրակացություն մենք կարող ենք հաստատ կերպով ասել, որ գրաբարը ունեցել է ժամանակի շարահյուսական կատեգորիան արտահայտող երկրորդական նախադասությունների հարուստ համակարգ՝ ընդունակ լինելով արտահայտելու օբյեկտիվ իրականության ամենաբարդ և նրբին ժամանակային հարաբերությունները։ Այդ նպա-

տակի համար նա ունեցել է իրեն սեփական, յուրահատուկ քերականական միջոցներ, որոնց հետազոտումը խիստ կարևոր է արդի հայերենի շարահյուսական համակարգում ժամանակի պարագա նախադասությունների էվոլյուցիան ճիշտ և ամբողջական պատկերացմամբ ըմբռնելու համար։

Л. Г. ХАЧЕРЯН

ПРИДАТОЧНЫЕ ОБСТОЯТЕЛЬСТВЕННЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ ВРЕМЕНИ В КЛАССИЧЕСКОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Резюме

В данной статье рассматриваются проявления придаточных обстоятельственных предложений времени в классическом армянском языке.

Обстоятельно показано, какими грамматическими средствами выражаются в грабаре придаточные обстоятельственные предложения, какие синтаксические функции они выполняют и какие семантические оттенки они выражают. Автор весь исследуемый материал разбивает на 2 большие группы под общими заглавиями.

1. Главные и придаточные предложения, выражающие одновременность действия.

2. Главные и придаточные предложения, выражающие различное время действия. А эти группы, в свою очередь, расцепляются на более детализированные и конкретные подгруппы. Так в группу главных и придаточных предложений, выражающих одновременность действия входят подгруппы:

а) главные и придаточные предложения, выражающие общую одновременность действия;

б) главные и придаточные предложения, выражающие частичную одновременность действия, где группируются и описываются сложные предложения различных структур.

В разделе главных и придаточных предложений, выражающих различное время действия, входят:

а) Придаточные предложения, предшествующие во времени действию главного предложения;

б) Придаточные предложения, следующие во времени за действием главного предложения, в которых группируются и описываются различные типы сложных предложений, указывая на особенности проявления каждого типа в отдельности и на их смысловые оттенки.